

ԼՅԱՐԴԻ ԱԼԿՈՒՅՈՒՄՆԻ ՅԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ. ԱՂԻՔԱՅԻՆ ՊԱՏՆԵՇԻ ԴԵՐՈ

ԳԵՄԻԼՅԱՆ Մ.Բ., ԳԵՎՈՐԳՅԱՆ Ն.Յ., ՅԱՎՈՔՅԱՆ Գ.Ս.

Երևանի Ս. Զեյնալու անվ. պետական բժշկական համալսարանի ներքին հիվանդությունների թիվ 4 ամբիոն, Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 28/07/2013թ., ընդունված է՝ 27/01/2014թ.

Ամբողջ աշխարհում ընդհանուր մահացության մոտ 4%-ն ալկոհոլի օգտագործման արդյունք է: Լյարդի ալկոհոլային հիվանդությունն իրենից ներկայացնում է տարբեր վիճակների սպեկտր՝ սովորական ստեատոզից մինչև լյարդի ֆիբրոզ, ցիռոզ և լյարդբջջային քաղցկեղ: Ալկոհոլային հեպատիտը, որը վերջերս բնորոշվում է որպես մեծ քանակով ալկոհոլի օգտագործման ֆոնի վրա առաջացող լյարդ-բջջային բորբոքման համախտանիշ, կարող է վերադարձվել լյարդի ալկոհոլային հիվանդության նշված փուլերից յուրաքանչյուրի վրա:

Եթանոլը, մարսողական ուղղում և լյարդում, մետաբոլիզմում է մինչև ագետալդեհիդ: Երկու նյութերն էլ աղիքային համակարգում առաջացնում են հետևյալ փոփոխությունները՝ բակտերիալ գերած, աղիքային միկրոֆլորայի կազմի փոփոխություն, սերտ և աղիքներն սնուցող միացումների քայքայում, որոնք աղիքային պատնեշի կարևոր մաս են կազմում, իսկ դա հանգեցնում է աղիքային թափանցելիության բարձրացման: Այս ամենը, լյարդային մակրոֆագերի կողմից բակտերիալ տոքսինների մաքրման նվազման հետ մեկտեղ, հանգեցնում է բակտերիալ տրանսլոկացիայի:

Էնդոտոքսինի բարձր մակարդակը խթանում է լիպոպոլիսախարիդի ազդանշանային համակարգը, որը ներառում է լիպոպոլիսախարիդ-կապող սպիտակուցը, toll-like և CD-4 ռեցեպտորները: Դա ակտիվացնում է կուպֆերյան բջիջները, որոնք էթանոլի ազդեցությամբ զգայունացված են LPS ներգործության հանդեպ և սկսում են արտադրել բորբոքային միջնորդանյութեր, որոնցից կարևորագույնը ալֆա-ուռուցքի նեկրոզի գործոնն է, ինչպես նաև թթվածնի ռեակտիվ տեսակները: Այս նյութերն առաջացնում են լյարդ-բջջային վնասում, բորբոքում, լյարդի աստղածն բջիջների ակտիվացում և հետագայում՝ ֆիբրոզ:

Երբ աղիքային պատնեշի պատահարման հետևանքով լյարդն ենթարկվում է Էնդոտոքսինով բարձր ծանրաբեռնվածության, այն գործի է դնում յուրատեսակ հակադարձ կապի մեխանիզմ, որն ուղղված է այդ պատնեշի պաշտպանական հատկությունների բարձրացմանը: Լյարդի ալկոհոլային հիվանդությամբ հիվանդների կղանքում բարձրանում է Fv-սպիտակուցի մակարդակը, որը հանդիսանում է B-բջջային սուպերանտիգեն և ուժեղացնում է աղիներում սեկրետոր իմունոգլոբուլին A-ի էֆեկտոր հատկությունները:

Այսպիսով, աղիքային պատնեշի ֆունկցիայի փոփոխությունը խիստ կարևոր է լյարդի ալկոհոլային հիվանդության պաթոգենեզում: Այս փոփոխության նուրբ մեխանիզմների բացահայտումն և աղիքային պատնեշի բաղադրիչների պաշտպանական հատկությունները բարձրացնող ստրատեգիաների մշակումը հանդիսանում են արդի լյարդաբանության կարևորագույն խնդիրներ՝ այս հիվանդության կանխարգելման և արդյունավետ բուժման ուղիներ փնտրելու համար: